Կահ-կա՜հ կը կանչէ՝ կաքաւն վըր քարին,

Վարդ-վա՜րդ կը կանչէ՝ բուլբուլն վըր թփին...

Ընթրիքի բոլոր ժամանակը, որ տեւեց բաւական երկար, խեղճ աշակերտները, ոտքի վրայ կանգնած, անլռելի ձայնով երգում էին: Նրանք սպառեցին հայոց հին տաղարաններից քաղած բոլոր յայտնի երգերը եւ մի քանիսը նորից կրկնեցին:

Ընթրիքից յետոյ, երբ մատուցին վերջին սուրճը եւ վերջին նարգիլէն, Ասլանը, ներողութիւն խնդրելով, յայտնեց՝ որովհետեւ առաւօտեան ճանապարհի պատրաստութիւններ պիտի տեսնէ, այդ պատճառով չէ կարող երկար մնալ եւ ինձ հրամայեց, որ ասեմ ծառաներին՝ մեր ձիաները պատրաստեն:

Յետոյ, կանգնելով, նա բռնեց նախ առաջնորդի ձեռքը եւ ապա փաշայի ձեռքը, յայտնեց իր խորին շնորհակալութիւնը նրանց հիւրասիրութեան մասին, աւելացնելով, թէ կտանէ իր հետ անմոռաց յիշատակներ այն բոլոր շնորհների համար, որ ցոյց տուին նրան, նպաստելով եւ դիւրացնելով իր հետազօտութիւնները եւ խոստացաւ, որ գուցէ մի օր ինքը առիթ կունենայ իր երախտագիտութեան զգացմունքները գործով արտայայտելու, եւ այլն:

— Մենք ոչինչ չենք արել, պարոն բժշկապետ, — պատասխանեցին փաշան եւ առաջնորդը միաձայն, — ինչ որ արել ենք, այդ մեր պարտքն էր:

Ուրիշ զանազան ողջագուրանքներից յետոյ նա կրկին եւ կրկին անգամ սեղմեց սրբազանի ու փաշայի ձեռքը, հեռուից գլուխ տուեց ոստիկանութեան պետին, քուրդ բեկին եւ հայոց երեք երեւելիներին եւ մնաք բարեաւ ասելով, դուրս եկաւ դահլիճից: Մինչեւ սանդուղքները փաշան եւ սրբազանը եկան նրա հետ: Այստեղ փաշան յայտնեց իր սրտի ցաւը, որ այդպէս շուտ զրկուեցաւ իր թանկագին հիւրից, որի այցելութիւնը այնքան մեծ բաւականութիւն պատճառեց իրան, եւ խոստացաւ, որ առաւօտեան ճանապարհի համար ամէն ինչ պատրաստ կը լինի:

Այդ բոլոր ցոյցերից յետոյ ես այլեւս տարակոյս չունէի, որ նրանց կասկածները Ասլանի վերաբերութեամբ բոլորովին փարատուեցան, եւ նրանք հեռու էին այն մտքից, թէ դոքտոր Ռիսմանի դիմակի ներքոյ թաքնուած էր Ս. Տիրամօր վանքի լեռնային ճգնաւորը:

Երբ դուրս եկանք առաջնորդարանից, փողոցում նորից լսելի եղաւ սիրուած երգը.

Սիրէ՛, կաքաւիկ, քո սիրուն քարիկ,

Սիրէ՛, բուլբուլիկ, քո վարդն անուշիկ...